

Թ Շ Ո Ւ Ա Ռ Ե Ղ Ի Ս Ա Ր Ե Թ.

Թարգմանեց Դ. ՏԷՐ-ԴԱԻԹԵԱՆՑ. Թիֆլիս. 1891. գինն է 10.

—

Կարամզինի այս գործը միայն պատմական արժէք ունի, ներկայացնում է ռուսական անցեալ կեանքին յատուկ մի երևոյթ, ասացէք ինդրեմ ի՞նչ կարիք կայ մեր օրերում վերցնել նրան և թարգմանել հայերէն լեզուով, քանի որ մեզ գեռ շատ աւելի կարևոր բաներ են պակասում և մեր ժամանակը ու ծախսը այսպիսի աննշան գործերի թարգմանութեամբ և հրատարակութեամբ չպիտի ոչնչացնենք:

—

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ի Յ Դ Ո Ւ Ր Ս.

Գրեց Կ. ԱՊՐԵԼԵԱՆ Ա. Թիֆլիզ. 1893. Գինն է 15 կոպէկ:

—

Առաջին գիրքը իբրև թարգմանութիւն աննպատակ էր, իսկ սա իբրև ինքնուրոյն գրուածք անմիտ է: Նկարագրած է մի մասնաւոր գէպը. թէ ինչպէս մի գիւղացի, քաղաք գալով ապրանք ծախելու, ընկնում է մի հայ վաշխառուի ձեռք, որ նորան իւր տուն տանելով գնում է գիւղացու ապրանքը, ուր սա տեսնում է քաղաքացու գեղեցիկ աղջկան և նորան սիրում, թողնելով գիւղը՝ գիւղացին գաղթում է քաղաք, բայց իւր սիրածը արգէն ուրիշին էր գնացել: Երկար ժամանակ քաղաքում աղքատութիւն քաշելուց յետոյ, վերադառնում է գիւղ և այնտեղ իւր կորցրած երջանկութիւնը յետ ստանում: Ակներև նկատում է, որ հեղինակը ցանկութիւն է ունեցել մեր գիւղական կեանքի վնասակար երևոյթներէից մէկի՝ այն է գաղթականութեան պատճառը մի նոր տեսակէտով բացատրել, բայց այնքան անբնական է դուրս եկել, այնքան անհամապատասխան մեր գիւղացու աշխարհահայեցողութեան, որ մեր մէջ հարց է ծագում ականայից՝ արդեօք հեղինակը օտարի նման մի գործի ազդեցութեամբ չէ գրել իւր գրքոյկը:

—